

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց Դիլիջանի հիմնադրման 470-ամյակին նվիրված միջոցառումներին 04.10.2014թ.

Հոկտեմբերի 4-ին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը նշեց հիմնադրման 470-ամյակը, որի կապակցությամբ քաղաքում կազմակերպվել էին միջոցառումների շարք և համաքաղաքային տոնախմբություն: Տոնական օրվան իրենց մասնակցությունն էին բերել նաև ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, ՀՀ Տավուշի մարզպետ Հովիկ Աբովյանը, գործարար և բարերար, Դիլիջանի միջազգային դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ, հիմնադիր Ռուբեն Վարդանյանը, ՀՀ-ում Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Սորին Վասիլեն: Քաղաքում այդ օրը միաժամանակ ընթանում էին բազմաբնույթ միջոցառումներ. մշակութային, տուրիզմի զարգացման շրջանակներում, շինարարական աշխատանքների հանդիսավոր ավարտ, շրջայց Դիլիջանի միջազգային դպրոցում: Մի խումբ միջոցառումների ներկա էր և մասնակցեց նաև Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: